պատճառով, պաշտօնից հրաժարուեց, և նրա տեղը անցաւ Տ. Բէգզադեանը, իսկ վերջինիս փոխարինեց Խորհրդարանի անդամ Մարտ. Ցարուբիւնեանը:

Պէտք է այստեղ արձանագրել — յարգանքով ու երախտագիտութեամբ — և ա՛յն անընահատելի ծառայութիւնը, որ մատուցանում էր Հայաստանին վերջին երեսնամեակի հայ ամենաինքնատիպ գործիչներից մէկը՝ Ստ. Մամիկոնեանը՝ Մոսկուայի Հայկական Կոմիտէի համբաւաւոր նախագահը: Նաև մի ուրիշ վաստակաւոր գործիչ՝ Սմբ. Խաչատրեանը, զրեթէ մշտական պատուիրակներն էին Հայկական կառավարութեան՝ Թիֆլիսում գումարուող խորհրդաժողովներին: Նա իր պաշտօնը կատարում էր առանձին սիրով ու ձեռնհասութեամբ: Անձնուէր հայրենասէր, դարդացած և իմացական հարուստ կարողութիւններով օժտուած գործիչ, ուժեղ ու հետեւողական կամքի տէր՝ նա կարողանում էր հայկական շահերը պաշտպանել այնպէս, ինչպէս չէր կարողանում ուրիշ ո՛չ մէկը իր միջավայրում: Ստ. Մամիկոնեանը ամբողջ կեանքում մնաց հաւատարիմ իր գաղափարներին և հայրենասէրի դառն բաժակը քամեց մինչև վերջին մրուրը: Մեռաւ Թիֆլիսում, յետին աղքատութեան մէջ՝ մերժելով նիւթական աջակցութիւնը հայ բոլշևիկների, որոնց համարում էր, Թիւրքերից յետոյ, հայ ժողովրդի վատթարագոյն թշնամին:

Հեշտ բան չէր Հայաստանի շահերի ներդաշնակումը հարևանների հետ: Ո՛չ միայն սահմանային ու գործնական ուրիշ խնդիրներ էին բաժանում հայերին ազրբէջանցիներից ու վրացիներից, այլ և միջազգային քաղաքականութեան դնահատութիւնը, օրիէնտացիայի խնդիրը, Կովկասի ապագայի ըմբռնումը և այլն: Մինչ հայերը իրենց ազգային պահանջների գոհացումը որոնում էին զաշնակիցների յաջողութեան և Թիւրքիայի քայքայման մէջ, կովկասեան մահմեականները դժբախտութիւն էին համարում Թիւրքիայի պարտութիւնը և ամէն վերպ աշխատում էին ուժեղացնել նրա ազդեցութիւնը Կովկասում: Մինչ, միւս կողմից, ազրբէջանցիներն ու վրացիները անվերապահ կռիւ էին յայտարարել հիւսիսին՝ խորհրդային թէ կամաւորական Ռուսաստանին, առհասարակ, ռուսութեան, հայերը հոգով Ռուսաստանի հետ էին, բնազդօրէն Ռուսաստան էին որոնում: Հայաստանի ներկայացուցիչները զօր. Դենիկինի ու Կոլչակի մօտ արտայայտութիւնն էին այդ «ռուսասիրութեան»: Եւ, վերջապէս, վրացիները, բայց, մանաւանդ, ազրբէջանցիները իրենց համար ձեռնտու էին համարում և յամառօրէն առաջ էին մղում կոնֆեդերացիայի ստեղծումը կովկասեան երկրներից՝ ուղղելով միացեալ Կովկասը Ռուսաստանի դէմ, հայերը, պահելով հանդերձ արտաքին համակրական վերաբերումը դէպի կոնֆեդերացիայի գաղափարը, ըստ էութեան հակառակ էին նրան:

Կոնֆեդերացիայի խնդիրը առաջին անգամ եկաւ կովկասեան չորս հանրապետութիւնների անդրանիկ խորհրդաժողովին, որ բացուեց ապրիլ 27-ին Թիֆլիսում՝ մասնակցութեամբ Հայաստանի կողմից արտ. գործ. նախարար Ս. Տիգրանեանի, արդ. նախ. Ս. Ցարուբիւնեանի և Հ. Խորհրդի